



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. հունվարին /վերլուծություն/

2007թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 8466 գործարքներ, որոնց քանակը 2006թ. հունվարի համեմատ աճել է 26.5%-ով, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 31.7%-ով:

2007թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3863 օտարման գործարքների 90.7% կազմել են առուվաճառքները, 8.9%՝ նվիրատվությունները և 0.4%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 24.1%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 28.1% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. հունվարին, 2006թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 30.9%-ով, իսկ 2006թ. հունվարի համեմատ աճել՝ 35.6%-ով: 2007թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.4% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2006թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 55.8%-ով, իսկ 2006թ. հունվարի համեմատ աճել՝ 3.8%-ով:

2007թ. հունվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>հունվար 2006թ.</i>	<i>հունվար 2007թ.</i>	<i>դեկտեմբեր 2006թ.</i>
Կենտրոն	354300	415200	403700
Արաբկիր	276200	324000	323300
Քանաքեռ-Զեյթուն	166200	226900	223800
Նոր-Նորք	156700	199500	194500
Ավան	138600	186600	181400
Էրեբունի	135900	204200	197900
Շենգավիթ	169800	214600	206300
Դավթաշեն	173200	222700	216500
Աջափնյակ	158600	198000	192800
Մալաթիա-Մեքաստիա	154000	189200	182800
Նուբարաշեն	96900	117600	117600
<i>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</i>	<i>180000</i>	<i>227100</i>	<i>221900</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հունվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ. դեկտեմբերի համեմատ աճել են 2.3%:

2007թ. հունվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 395 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 28.8%-ով, իսկ 2006թ. հունվարի համեմատ աճել՝ 24.2%-ով:

2007թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2006թ.	հունվար 2007թ.	դեկտեմբեր 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	51200	88000	84000
	Ապարան	23800	28000	28000
	Թալին	22300	32000	30000
Արարատ	Արտաշատ	41300	69000	66000
	Մասիս	52400	78306	77000
	Վեդի	35700	52000	52000
	Արարատ	37800	51000	51000
Արմավիր	Վաղարշապատ	75700	109000	106000
	Արմավիր	46400	77000	74000
	Մեծամոր	29200	50000	48000
Գեղարքունիք	Սևան	31700	51000	49000
	Գավառ	22700	31000	31000
	Մարտունի	36700	46000	44000
	Վարդենիս	19400	25000	25000
	Ճամբարակ	10700	13900	13900
Լոռի	Վանաձոր	42700	62100	62000
	Ստեփանավան	23000	31500	30000
	Մայիսակ	26900	42300	40300
	Ալավերդի	18300	23300	23300
	Տաշիր	20000	22000	22000
	Թումանյան	5300	5400	5400
	Շամլուղ	2800	3000	3000
	Ախթալա	10400	10900	10900
Կոտայք	Աբովյան	80400	126048	122000
	Նոր Հաճն	57200	86000	83000
	Բյուրեղավան	37700	60000	60000
	Եղվարդ	51100	80000	76000
	Հրազդան	34300	44000	43000
	Ծաղկաձոր	61100	80600	80600
	Զարենցավան	36100	52000	52000
Շիրակ	Գյումրի	44500	60166	59000
	Արթիկ	25600	40000	39000
	Մարալիկ	21700	23800	23800
Սյունիք	Գորիս	45800	61300	59000
	Կապան	35700	56500	56000
	Միսիան	28300	47400	47400
	Մեղրի	23700	35300	35300
	Ագարակ	17800	23000	23000
	Քաջարան	21700	29700	29700
Վայոց Ձոր	Դաստակերտ	6400	6800	6800
	Վայք	31000	54000	51600
	Եղեգնաձոր	44200	63400	63400
Տավուշ	Զերմուկ	52100	92000	92000
	Դիլիջան	34900	58000	58000
	Իջևան	43000	77000	74000
	Բերդ	25900	33000	33000
	Նոյեմբերյան	14300	26000	26000
	Այրում	18000	18000	18000

2007թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ. դեկտեմբերի համեմատ աճել են 2.1%:

2007թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 401 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 71, մյուս մարզերում միասին վերցրած՝ 330: 2006թ. դեկտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 24.3%-ով, ընդ որում Երևանում՝ 34.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 21.8%-ով: 2006թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 9.6%-ով, ընդ որում Երևանում նվազել է 9.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 14.6%-ով:

2007թ. հունվարին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>հունվար 2006թ.</i>	<i>հունվար 2007թ.</i>	<i>դեկտեմբեր 2006թ.</i>
Կենտրոն	357900	417000	406600
Արաբկիր	283500	334100	327500
Քանաքեռ-Զեյթուն	168800	232600	226900
Նորք-Մարաշ	183900	203100	197900
Ավան	142900	188700	185400
Էրեբունի	141900	206000	200600
Շենգավիթ	173400	216200	208400
Դավթաշեն	175300	224500	218700
Աջափնյակ	160600	200500	195900
Մալաթիա-Մեքաստիա	157700	191400	185400
Նուբարաշեն	98500	120500	119600
<b><i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i></b>	<b><i>185800</i></b>	<b><i>230400</i></b>	<b><i>224800</i></b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հունվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. դեկտեմբերի համեմատ աճել են 2.5 % :

2007թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

<i>Մարզեր</i>	<i>Քաղաքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
		<i>2006թ. հունվար</i>	<i>2007թ. հունվար</i>	<i>2006թ. դեկտեմբեր</i>
Արագածոտն	Աշտարակ	52900	89800	85300
	Ապարան	25600	29700	29000
	Թալին	24000	33600	31200
Արարատ	Արտաշատ	43200	71000	67500
	Սասիս	53600	82400	78400
	Վեդի	36600	54800	53200
	Արարատ	39200	53700	52500
Արմավիր	Վաղարշապատ	76700	111400	107100
	Արմավիր	47300	79400	75200
Գեղարքունիք	Սևան	38400	52700	50200
	Գավառ	24500	33000	32300
	Մարտունի	38800	48100	45300
	Վարդենիս	21600	27900	26800
	Ճամբարակ	12600	15900	15200
Լոռի	Վանաձոր	44500	65000	63400
	Ստեփանավան	26900	34200	31500
	Սպիտակ	28800	44300	41800
	Ալավերդի	20400	25300	24800
	Տաշիր	21500	23900	23300
	Թումանյան	6900	7300	7300
	Շամլուղ	4300	4800	4600
	Ախթալա	12000	12800	12600
Կոտայք	Արուսյան	82700	128900	123300
	Նոր Հաճն	58800	88500	84300
	Բյուրեղավան	39200	62300	61100
	Եղվարդ	51700	82700	77100
	Հրազդան	34600	46200	44200
	Ծաղկաձոր	61400	87000	86600
	Չարենցավան	38200	54100	53200
Շիրակ	Գյումրի	47300	62300	60500
	Արթիկ	27700	42000	40300
	Մարալիկ	23500	25900	25300
Սյունիք	Գորիս	47000	63500	60300
	Կապան	35900	59100	57600
	Սիսիան	29600	49600	49000
	Մեղրի	24900	37500	36700
	Ագարակ	20000	25000	24100
	Դաստակերտ	8700	9000	9000
Վայոց Ձոր	Վայք	32500	55900	53200
	Եղեգնաձոր	45700	65700	65200
	Ջերմուկ	32600	42900	41600
Տավուշ	Դիլիջան	35600	60300	59100
	Իջևան	40900	79000	75100
	Բերդ	27200	34900	34100
	Նոյեմբերյան	15500	27800	27200
	Այրում	19200	19200	19200

2007թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. դեկտեմբերի համեմետ աճել են 3.7 %:

Ընդհանուր առմամբ, 2007թ. հունվարին հանրապետությունում օտարվել են 1933 միավոր /1278.47 հա/ հողեր, որից Երևանում՝ 76 միավոր /9.02 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 53 միավոր /13.90 հա/ հողեր, որից Երևանում՝ 24 միավոր /23.09 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 963 միավոր /1147.81 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.25 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 615 միավոր /64.53 հա/, որից Երևանում՝ 38 միավոր /4.09 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 314 միավոր /37.09 հա/, որից Երևանում՝ 34 միավոր /4.47 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 18 միավոր /2.94 հա/, որից Երևանում՝ 1 միավոր, /0.22 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր 22 միավոր /25.98 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 1 միավոր /0.12 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. հունվարին հանրապետությունում օտարված հողերից 1861 միավորի /1250.46 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 74 միավոր /8.89 հա/, նվիրատվության գործարքներ՝ 66 միավորի /25.46 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.12 հա/ և փոխանակության գործարքներ՝ 6 միավորի /2.55 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.02 հա/:

Հանրապետությունում 2007թ. հունվարին, 2006թ. հունվարի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 76.9%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 85.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 95.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 75.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 410.84 հա, որից 406.00 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 56.7% կամ 1056 գործարքներ /726.40 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 36 գործարքներ /4.21 հա/, իսկ 43.1%-ը կամ 803 միավորը /514.06 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 38 միավոր /4.67 հա/: 2007թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են կառուցապատման իրավունքի վաճառքի 2 գործարք /10.00 հա/:

Ստորև ներկայացվում է 2007թ. հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	1	0.22	12	1.23	23	2.77	2	0.13	0	0.00	25	2.84	11	1.71
Արագածոտն	87	129.45	0	0.00	12	1.53	16	0.50	30	17.67	0	0.00	18	1.35	2	0.17
Արարատ	85	117.80	5	0.44	190	19.83	45	1.07	90	29.82	1	0.03	60	6.00	4	0.05
Արմավիր	87	158.20	3	0.26	0	0.00	16	0.93	76	247.81	0	0.00	34	3.39	7	0.25
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	4	4.21	22	1.44	15	10.47	0	0.00	15	1.88	0	0.00
Լոռի	67	70.72	0	0.00	2	0.06	39	2.50	120	72.40	0	0.00	8	1.28	2	0.23
Կոտայք	71	119.74	1	0.04	42	3.50	25	10.06	104	55.99	0	0.00	78	7.53	6	4.87
Շիրակ	3	2.28	3	0.41	23	1.19	22	1.42	23	23.42	0	0.00	10	1.11	3	0.06
Սյունիք	3	1.31	0	0.00	0	0.00	8	0.62	11	10.30	0	0.00	2	0.17	4	0.28
Վայոց Ձոր	16	44.76	0	0.00	6	0.25	37	1.64	5	1.73	0	0.00	5	0.57	1	0.02
Տավուշ	3	0.41	3	1.29	38	3.01	18	6.43	18	8.49	0	0.00	8	0.81	1	0.06
Ընդամենը	422	644.67	16	2.66	329	34.81	271	29.38	494	478.23	1	0.03	263	26.93	41	7.70

Ստորև ներկայացվում է 2007թ. հունվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	15	1.69	1	0.22	1	0.01	13	1.46	21	2.53	0	0.00	0	0.00	11	1.22	10	1.31
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	115	131.48	87	129.45	0	0.00	12	1.53	16	0.50
Արարատ	12	0.19	0	0.00	1	0.12	11	0.07	313	138.94	85	117.80	5	0.44	189	19.71	34	0.99
Արմավիր	5	0.19	2	0.16	0	0.00	3	0.03	101	159.20	87	158.20	1	0.10	0	0.00	13	0.90
Գեղարքունիք	5	4.66	0	0.00	2	4.01	3	0.56	21	1.08	0	0.00	0	0.00	2	0.20	19	0.88
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	108	73.28	67	70.72	0	0.00	2	0.06	39	2.50
Կոտայք	7	0.27	0	0.00	2	0.12	5	0.15	131	132.97	70	119.64	1	0.04	40	3.38	20	9.91
Շիրակ	2	0.02	0	0.00	0	0.00	2	0.02	49	5.27	3	2.28	3	0.41	23	1.19	20	1.39
Սյունիք	3	0.11	0	0.00	0	0.00	3	0.11	8	1.82	3	1.31	0	0.00	0	0.00	5	0.51
Վայոց Ձոր	7	1.19	0	0.00	0	0.00	7	1.19	52	45.46	16	44.76	0	0.00	6	0.25	30	0.45
Տավուշ	6	1.36	3	1.29	0	0.00	3	0.07	56	9.78	3	0.41	0	0.00	38	3.01	15	6.36
Ընդամենը	62	9.68	6	1.67	6	4.26	50	3.66	975	701.63	421	644.57	10	0.99	323	30.55	221	25.70

Հանրապետությունում 2007թ. հունվարին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.10 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. հունվարին 2006թ. հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 4.1 անգամ: Ընդ որում Երևանում նվազել է 41.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 4.7 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 4.4 անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 3.4 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 6.5 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 5.0 անգամ :

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հունվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մոտավերագույն	Միջին			Նվազագույն	Մոտավերագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	74	83.45	36.8	373.3	463.2	20	7.79	362.2	6772.5	2415.5
Ապարան								90.6	767.6	352.3
Թալին	11	46.00	34.0	106.3	42.3	10	9.88	90.6	758.5	348.3
Ծաղկաձոր								77.0	948.2	164.2
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	43	48.59	36.4	2676.2	1126.8	33	8.54	335.1	5418.0	1316.7
Մասիս	6	20.71	35.4	1588.2	706.5	25	7.54	181.1	6772.5	1688.6
Վեդի	36	48.50	32.9	2572.1	1674.0	30	12.78	203.8	4515.0	1092.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	40	63.05	28.8	1537.9	344.7	22	14.21	294.3	4063.5	846.4
Բաղրամյան	28	14.66	33.8	622.1	87.6	14	183.72	90.6	677.3	525.4
Վաղարշապատ	19	80.49	26.9	837.4	260.5	37	45.00	443.7	9030.0	1395.3
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						10	2.62	190.2	496.7	345.6
Ճամբարակ								45.3	541.8	143.2
Մարտունի								45.3	1806.0	458.2
Սևան								45.3	451.5	188.3
Վարդենիս						5	7.84	27.2	532.8	224.9
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	65	68.22	210.0	1002.7	322.9	105	59.97	163.0	2483.3	990.0
Գուգարք						7	5.07	226.4	2709.0	902.9
Սպիտակ	1	2.00	130.0	130.0	130.0	1	0.14	226.4	1490.0	498.1
Ստեփանավան	1	0.50	2112.0	2112.0	2112.0	1	1.06	90.6	2257.5	352.3
Տաշիր						1	2.34	45.3	451.5	197.8
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	5	8.54	36.7	1111.4	476.0	44	20.81	271.7	11287.5	3055.7
Եղվարդ	31	48.00	35.4	1384.6	141.4	53	26.29	172.1	11287.5	2150.4
Հրազդան	34	63.10	54.8	1762.5	409.3	7	8.89	113.2	2709.0	820.7
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	1	2.00	142.0	142.0	142.0	12	15.35	249.0	1693.1	427.9
Ամասիա						1	0.28	36.2	237.0	106.6
Անի						9	7.68	108.7	361.2	217.4



Աշոցք						1	0.10	45.3	165.0	111.5
Արթիկ	2	0.28	330.0	330.0	330.0			63.4	1083.6	164.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	2.40	90.6	673.3	327.5
Կապան	3	1.31	183.6	2904.0	1237.7	1	0.07	54.3	841.6	218.8
Մեղրի						2	0.38	181.1	1784.2	437.8
Սիսիան						7	7.45	45.3	631.2	210.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	12	43.10	32.8	214.7	67.0	3	0.55	117.7	2524.8	1238.8
Վայք	4	1.66	74.7	587.9	203.2	1	1.00	54.3	1430.7	492.3
Տավուշի մարզ										
Բերդ						5	2.68	45.3	841.6	330.4
Իջևան	3	0.41	800.0	800.0	800.0	1	0.10	240.0	1683.2	782.8
Նոյեմբերյան						12	5.71	45.3	3509.5	480.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հունվարին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	10	11600.0	112.7	2520.0	805.9	17	10740.0	113.2	3612.0	2180.5
Ապարան								113.2	632.1	180.1
Թալին	2	3703.0	116.6	116.6	116.6	1	2730.0	45.3	361.2	85.5
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
Արարատի մարզ										
Արտաշատ	133	139799.0	168.0	1056.0	280.7	18	20048.0	135.8	2709.0	840.5
Մասիս	9	8529.0	631.5	1623.4	1112.1	27	20150.0	135.8	9030.0	1058.7
Վեդի	47	48785.0	173.7	413.3	241.2	14	13800.0	113.2	993.3	615.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						15	16030.0	135.8	2257.5	992.6
Բաղրամյան								81.5	270.9	120.1
Վաղարշապատ						19	17910.0	135.8	4515.0	1355.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1220.0	135.8	903.0	335.1
Ճամբարակ						1	752.0	45.3	135.5	90.1
Մարտունի						5	7930.0	90.6	451.5	206.5
Սևան						6	5759.3	90.6	903.0	132.5
Վարդենիս	2	2000.0	175.0	175.0	175.0	2	3089.0	45.3	225.8	94.8
Լոռու մարզ										
Ալավերդի						5	9550.0	67.9	270.9	113.8
Գուգարք						1	582.0	67.9	2347.8	516.6
Սպիտակ	1	300.0	284.0	284.0	284.0	1	1630.0	63.4	451.5	113.2
Ստեփանավան	1	341.0	114.4	114.4	114.4	1	1000.0	45.3	270.9	92.1

Տաշիր								45.3	135.5	66.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	1250.0	1242.0	1503.3	1372.7	33	31609.0	135.8	6772.5	1628.6
Եղվարդ	24	19200.0	1481.3	1481.3	1481.3	42	41890.0	135.8	6772.5	1760.3
Հրազդան	14	13375.0	121.1	656.0	199.7	3	1760.0	135.8	9030.0	1134.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	15	3220.0	971.4	3888.9	2097.3	5	3730.0	113.2	1535.1	308.4
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի						1	1504.0	67.9	180.6	92.8
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	8	8710.0	30.0	426.0	105.9	4	5890.0	67.9	925.6	148.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1710.0	67.9	541.8	222.8
Կապան								67.9	632.1	193.6
Մեղրի								67.9	406.4	108.8
Միսիան								67.9	406.4	130.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	1800.0	121.0	685.0	458.7	5	5700.0	67.9	1128.8	254.8
Վայք	1	700.0	447.9	447.9	447.9			77.0	632.1	110.2
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	38	30055.0	1430.0	2300.0	1810.7	7	7509.0	67.9	1354.5	365.5
Նոյեմբերյան						1	620.0	45.3	632.1	116.8

2007թ. հունվարին հանրապետությունում հողերի նկատմամբ անհատույց սեփականաշնորհման գործարքներ չեն գրանցվել:

2007թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 739 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.7%: Ընդ որում, վարձակալության գործարքների 52.0% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. հունվարին 2006թ. դեկտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 1.1%-ով, իսկ 2006թ. հունվարի համեմատ՝ 52.4%-ով:

2007թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 47 բնակարանների, 29 անհատական բնակելի տների, 211 հասարակական, 26 արտադրական նշանակության օբյեկտների, 423 միավոր /13951.21 հա/ հողերի և 3 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 13 վարձակալության գործարքների քանակը 2006թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 69.8%-ով, իսկ 2006թ. հունվարի համեմատ՝ 43.5%-ով:

2007թ. հունվարին հանրապետությունում վարձակալված 13951.21 հա հողերից 0.31 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 13950.90 հա հողերի 38.40 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 3.03 հա՝ էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 12701.95 հա, որից 500.16 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1139.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. հունվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական

նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	43	59.00
Արարատ	3	180.00	14	47.27
Արմավիր	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	6	379.00	19	43.74
Լոռի	0	0.00	140	142.54
Կոտայք	4	180.00	13	21.39
Շիրակ	0	0.00	40	126.99
Սյունիք	2	400.00	21	100.16
Վայոց Ձոր	0	0.00	1	1.50
Տավուշ	0	0.00	1	0.22
<b>Ընդամենը</b>	<b>15</b>	<b>1139.00</b>	<b>292</b>	<b>542.81</b>

2007թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 829 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.8%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 50.0%-ով, իսկ 2006թ. հունվարի համեմատ աճել՝ 89.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.5%/, առանձնատների /22.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.4%/ և արտադրական նշանակության օբյեկտների /8.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 348 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 50.3%-ով, իսկ 2006թ. հունվարի համեմատ աճել՝ 70.6%-ով:

2007թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել են 105.98 հա հողեր, որից 3.68 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 94.5% կամ 100.14 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 44.50 հա, գյուղատնտեսական նշանակության:

2007թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 2-ական գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2006թ. դեկտեմբերի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել 75.0%-ով, իսկ 2006թ. հունվարի համեմատ՝ 63.6%-ով: 2007թ. հունվարին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են Երևանում՝ 50.0%, Արարատի և Տավուշի մարզերում՝ 25.0-ական %:

2007թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1624 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 17.6%-ով, իսկ 2006թ. հունվարի համեմատ՝ աճել 63.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 19.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /40.5%/: **ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**